ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ ԼԵՎԻԿԻ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՍԵՂՄԱԳԻՐ

Ը.00.02 - Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խաչատուրի Մարկոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վարդան Բաբկենի Բոստանջյան, տնտեսագիտության թեկնածու Կարապետ Հովհաննեսի Թոմիկյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. հուլիսի 1-ին ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0009, ք. Երևան, Խ. Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. մայիսի 20-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տ.գ.թ.,դոցենտ Ա.Հ. Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպությունների գործունեությունը օբյեկտիվորեն նպաստել է տնտեսագիտական բնագավառում "կազմակերպության կայունություն" հասկացության ներմուծմանը: Ներկայումս, հատկապես Հայաստանի տնտեսության մեջ այն շատ հաճախ նույնացվում է ֆինանսական կայունության հետ, որն արտահայտում է անհավասարակշիռ շուկայական միջավայրում կազմակերպության ֆինանսա-տնտեսական գործունեության արդյունքների համապատասխանության աստիճանը գործող շուկայական պահանջներին և պայմաններին:

Սակայն կազմակերպության կայունությունը առավել լայն հասկացություն է: Այն կազմակերպության հատկանիշն է, նրա կարողությունը՝ գործել և զարգանալ արտաքին և ներքին ազդեցությունների պայմաններում՝ պահպանելով իր հավասարակշռությունը:

Շուկայական համակարգում կազմակերպությունների զարգացումը, որպես նրանց կայունության բարձրացման գործընթաց, կապված է տնտեսական հիմքի հետևողական ստեղծման անհրաժեշտության հետ: Վերջինիս իրագործումն ունի բազմակողմանի ուղղվածություն: Աշխատանքում ուսումնասիրվում է խնդիրների այն համալիրը, որը վերաբերում է ժամանակակից կազմակերպության կայունության և զարգացման ոլորտին: Ամբողջության մեջ այդ խնդիրների հաջող լուծումը կազմակերպություններին թույլ կտա առավել արդյունավետորեն դիմակայել տարբեր տեսակի շուկայական տատանումներին և բարձրացնել իրենց կայունությունը:

Կազմակերպության կայունության հիմնախնդիրը դեռևս գտնվում է տեսական-ճանաչողական ձևավորման փուլում: Հիմնախնդրի անբավարար ուսումնասիրությունը ծնում է կայունության հասկացության և նրա մակարդակի բարձրացման տարակարծիք մեկնաբանություններ: Մասնագիտական գրականության մեջ կազմակերպության կայունության վերաբերյալ ուսմնասիրությունները հիմք չեն տալիս դադարեցնելու գիտական որոնումները նրա մակարդակի գնահատման և բարձրացման գործում: Այստեղ անհրաժեշտ են նոր, հստակ տեսական կողմնորոշիչներ:

Կազմակերպության կայունության և զարգացման տեսության հիմունքների ուսումնասիրումը և գործնական առաջարկությունների մշակումը հնարավորություն կտա որակապես փոխել կազմակերպությունների և դրանցում տեղի ունեցող գործընթացների կարգավորման նկատմամբ մոտեցումները, որոնք վերջին հաշվով կնպաստեն շուկայական պայմաններին կազմակերպությունների արդյունավետ հարմարեցմանը:

Հետազոտության հիմնական նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը շուկայական հարաբերությունների պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների կայունության ապահովմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել կազմակերպությունների կայունության տեսական և մեթոդաբանական հիմքերը,
- բացահայտել արդյունաբերական կազմակերպությունների կայունության վրա ազդող գործոնները,
- վերլուծել կազմակերպությունների կայունության գնահատման մեթոդները,
- ուսումնասիրել Հայաստանի արդյունաբերական կազմակերպությունների կայունության ապահովման առանձնահատկությունները,
- գնահատել Հայաստանի արդյունաբերական կազմակերպությունների կայունության մակարդակը,
- բացահայտել պետության դերը արդյունաբերական կազմակերպությունների կայունության ապահովման գործում,
- մշակել առաջարկություններ, ուղղված «պետություն-մասնավոր հատված» գործընկերության բարելավմանը,
- մշակել արյունաբերական կազմակերպություններում նորարական գործունեության խթանմանը և սոցիալական կայունությանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության առարկան՝ արդյունաբերական կազմակերպության կայունության բարձրացման տեսական և գործնական հարցերի համալիրն է:

Հետազոտության օբյեկտը՝ ՀՀ արդյունաբերական կազմակերպություններն են, դրանցում իրականացվող տնտեսական գործընթացները:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության համար տեսական, մեթոդաբանական հիմք են ծառայել տնտեսագիտության հիմնական դրույթները, տնտեսական կայունությանը վերաբերող հայրենական և արտասահմանյան գիտնականների աշխատանքները, արդյունաբերական կազմակերպությունների կայունության զարգացմանը նվիրված հետազոտությունները, գիտական հրապարակումները, գիտագործնական մշակումները:

Տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տեղեկագրերը, տնտեսական կայունությանն առնչվող միջազգային կազմակերպությունների փաստաթղթերը և վերլուծությունները, ՀՀ արդյունաբերական կազմակերպությունների տարեկան հաշվետվությունները:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Ատենախոսությունում կատարված տեսական հետազոտությունների, վերլուծությունների ու գիտական ընդհանրացումների արդյունքում ստացվել են հետևյալ հիմնական արդյունքները և գիտական նորույթը.

1. ՀՀ արդյունաբերության կառուցվածքի կատարելագործման և հանրապետությունում ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով աշխատանքում մշակվել են «պետություն-մասնավոր հատված» գործընկերության բարելավմանը միտված առաջարկություններ, ուղղված հիմնական միջոցների արդիականացմանը, շրջանառու ֆոնդերի հայթայթմանը, ֆինանսական հոսքերի կառավարմանը, տրանսպորտային և արտադրական լոգիստիկական համակարգերի օգտագործմանը:
2. Հայաստանի արդյունաբերական կազմակերպությունների տնտեսական կայունության բարձրացման նպատակով մշակվել են հայեցակարգային մոտեցումներ, որոնք ելնելով արտաքին միջավայրի հետ կազմակերպության փոխգործակցային կապերից, տեղեկատվական ապահովվածությունից և գործունեության ռազմավարական ուղղությունների ընտրությունից, թույլ կտան խթանել արտաքին ներդրումների

ներգրավումը և արտադրության տեխնոլոգիական ուղղությունների զարգացումը:

3. Իրականացվել է կազմակերպությունների կայունության ապահովման գործում սոցիալական գործոնի կարևորության համակողմանի հիմնավորում և մշակվել է դրա ամրապանդմանն ուղղված մոտեցումներ, որոնք կնպաստեն կազմակերպություններում արտադրողականության բարձրացմանը, գործարար ակտիվության խթանմանը, նորամուծությունների առաջադրմանը և ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը:

Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսամեթոդական դրույթները, եզրակացություններն ու առաջարկությունները կարող են տեսական հիմք լինել նոր հետազոտությունների համար:

Հետազոտության հիմնական արդյունքները, ընդհանրացումները և վերլուծությունները կարող են օգտագործվել արդյունաբերական կազմակերպությունների կայունության բարձրացման մոտեցումների մշակման ու դրանց գործնական կիրառման գործընթացներում:

Հետազոտության գործնական հանձնարարականները նախադրյալներ են ստեղծում ՀՀ արդյունաբերության կառուցվածքի կատարելագործման, արդյունաբերական կազմակերպություններում կայունության ապահովման, հանրապետությունում ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման և սոցիալական հիմնախնդիրների արդյունավետ լուծման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի 2016 - 2020թթ. տարեկան գիտաժողովներում և Տնտեսագիտության և փոխադրումների կազմակերպման ամբիոնի նիստում:

Աշխատանքի հիմնական դրույթները հրապարակվել են ութ գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը շարադրված է 124 էջի վրա, ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, աշխատանքի տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ ***«Կազմակերպությունների կայունության տեսական և մեթոդաբանական հիմքերը»*** գլխում դիտարկվել է կազմակերպությունների կայունության հասկացությունը և վեր են հանվել դրա ապահովման խնդիրները, բացահայտվել են արդյունաբերական կազմակերպությունների կայունության վրա ազդող գործոնները և ուսումնասիրվել են արդյունաբերական կազմակերպությունների կայունության գնահատման մեթոդները:

Կազմակերպության կայունության հասկացության տակ երբեմն հասկանում են նրա արտադրական, նորարարական, կազմակերպական, ֆինանսական գործունեության հատկությունների համալիր, դրանց փոխազդեցությունը և փոխգործակցությունը, արտադրանքի որակը, նյութատեխնիկական հիմքի մակարդակը, ռեսուրսային ապահովվածությունը, կադրային և մտավոր ներուժը: Կազմակերպության կայունության կարևորագույն բնութագրիչ գծերից են արտաքին միջավայրի բացասական ազդեցության կորուստների նվազեցումը և տնտեսավարման շուկայական, տեխնոլոգիական, կազմակերպական և ռեսուրսային պայմաններին համապատասխան զարգացումը:

Միևնույն ժամանակ, չափազանց կարևոր է երկրում իրավական կանոնակարգվածության մակարդակը, որը կարող է էապես նպաստել կամ խոչընդոտել կազմակերպության կայունությանը:

Պետության գործունեության հնարավոր տեսակների բազմազանությունից շուկայական տնտեսության պայմաններում կարելի է առանձնացնել երեք հիմնական գործառույթներ. արդյունավետության բարձրացում, իրավահավասարության ապահովում, մակրոտնտեսական կայունության և տնտեսական աճի խթանում[1]:

---

[1] Самуэльсон П., Нордхаус В. Экономика. Пер. С. англ., БИНОМ. 1997 г., Москва, стр. 74 [68]

Տնտեսության պետական կարգավորումն անհրաժեշտություն է, քանի որ շուկայի անկատարության պատճառով առաջացող բացասական հետևանքների հաղթահարումը կարող է տեղի ունենալ միայն պետության գործուն միջամտության արդյունքում[2]:

Ընդհանրացնելով և համեմատելով կազմակերպության տնտեսական կայունության հասկացության մեկնաբանման տնտեսագիտական գրականության մեջ առկա մոտեցումները, կարծում ենք առավել ընդունելի է այն գիտնականների տեսակետը, ովքեր տնտեսական կայունությունը դիտարկում են որպես կազմակերպության կարողություն, նրա հիմնական հատկություն, որի մակարդակի գնահատումը կարող է կատարվել կազմակերպության վիճակի (գործառույթների) և կառուցվածքի ցուցանիշների վերլուծության միջոցով: Տնտեսագետների մեծ մասը տնտեսական կայունությունը ներկայացնում են որպես իր հիմնական ցուցանիշները որոշակի մակարդակում պահպանելու կազմակերպության կարողության բնութագիր՝ արտաքին և ներքին գործոնների ազդեցության պայմաններում: Միաժամանակ այդ աշխատանքներում արտացոլում չեն գտել կազմակերպության գործունեության կազմակերպական գործոնները և դրանց ազդեցությունը կայունության վրա, մինչդեռ գործնականում կայուն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ է կիրառել մենեջմենթի և արտադրության կազմակերպման նոր, արդյունավետ համակարգեր, որոնք վերաբերում են տեխնոլոգիական գործընթացների կազմակերպմանը, արտադրության պլանավորմանը, վերահսկմանը, տեղեկատվության կառավարմանը, մարքեթինգին և այլն:

Կազմակերպության կայունության մեկնաբանությունը, ըստ մեր կարելի է ներկայացնել հետևյալ սահմանմամբ. կազմակերպության կայունությունը բնութագրում է ներքին և արտաքին միջավայրերի ազդեցության տակ նրա վիճակի էական ցուցանիշների օպտիմալ մակարդակի պահպանման կարողությունը, ինչն ապահովում է նրա հավասարակշռությունը և զարգացման ուղղվածությունը:

Մեր կարծիքով կարելի է ընդգծել տնտեսական կայունությանը բնորոշ հետևյալ հիմնական գծերը.

---

[2] Բոստանջյան Վ. Բ., Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում: ԵՊՀ հրատ., Երևան, 2017թ., էջ 16 [26]

- տնտեսական կայունության հիմքը ինքնակազմակերպման գործընթացներն են, որոնք գործում են հարմարեցման կառուցակարգի հիման վրա: Այն հավասարակշռված վիճակ է, որում գտնվում է կազմակերպությունը և որը կարող է անցում կատարել նոր, ավելի բարձր հավասարակշռության վիճակի,

- տնտեսական կայունությունը ներքին և արտաքին միջավայրերի տարբեր փոփոխություններին կազմակերպության արագ արձագանքման կարողությունն է, երբ դրանով իսկ վերականգնվում է համակարգի հավասարակշռությունը: Այն բաց համակարգի հավասարակշռության կայուն վիճակ է՝ ներքին և արտաքին միջավայրերի հետ փոխգործակցության ընթացքում:

- տնտեսական կայունությունը տնտեսական համակարգի երկու փոխկապակցված գործընթացների՝ գործունեության և զարգացման արդյունք է: Այն դինամիկ երևույթ է, որը թույլ է տալիս վերականգնել նախկին մակարդակը և ընդունել նոր, ավելի բարձր մակարդակ,

- տնտեսական կայունությունը պահպանում է կազմակերպության ցուցանիշների օպտիմալ մակարդակը և ապահովում է զարգացման ուղղվածությունը,

- տնտեսական կայունությունը կազմակերպության զարգացման հիմքն է, իսկ զարգացումը կայունության բարձրացման գործընթաց է:

Կազմակերպության կայունությունը կախված է ներքին և արտաքին միջավայրից, գործունեության բնույթից, ռեսուրսների առկայությունից, կառավարման արդյունավետությունից և այլն: Դրանցից կայունության վրա ամենամեծ ազդեցությունը թողնում է արտաքին միջավայրը: Դրանք են՝ տնտեսական պայմանները, օրենսդրությունը, տեխնոլոգիան, մրցակիցները և այլն: Կազմակերպությունը կախված է արտաքին միջավայրից ինչպես ռեսուրսների գծով, այնպես էլ սպառողների միջոցով, որոնք օգտվում են իր աշխատանքի արդյունքներից: Արտաքին միջավայրը երբեք անփոփոխ չի լինում, այդ պատճառով էլ անհրաժեշտ է կարողանալ արդյունավետ արձագանքել այդ փոփոխություններին[3]:

---

[3] Աղաջանյան Ա.Լ., Կազմակերպության կայունության հայեցակարգը: ՀԱՊՀ Լրաբեր գիտական հոդվածների ժողովածու, մաս 2 Երևան, 2019, էջ 338 [6]

Տնտեսական կայունության վրա ազդող հիմնական արտաքին գործոնները կարող են լինել ընդհանուր տնտեսական և շուկայական:

Միևնույն ժամանակ՝ արտաքին միջավայրի գործոնները կազմակերպության ղեկավարության կողմից անվերահսկելի են և այդ պատճառով էլ դրանք անհրաժեշտ է վերլուծել և կանխատեսել:

Տնտեսական կայունության վրա ազդող հիմնական ներքին գործոնները կարելի է բաժանել ըստ հետևյալ խմբերի՝

- տեխնոլոգիական գործոններ (տեխնոլոգիական գործընթացների ավտոմատացում, ճկուն համակարգերի կիրառում, արտադրության տեխնիկական զարգացում և այլն),
- կազմակերպական գործոններ (արտադրության մասնագիտացում, ներդրումային և նորամուծական գործունեություն, մարքեթինգի և մենեջմենթի բարելավում, կազմակերպական կառուցվածքի կատարելագործում և այլն),
- տնտեսական գործոններ (արտադրանքի ծավալը, արտադրության ծախսերը, իրացման ծավալը, հիմնական ֆոնդերի օգտագործումը և այլն),
- սոցիալական գործոններ (սոցիալական ենթակառուցվածքները, կադրային ապահովվածությունը, աշխատանքի պայմանները, աշխատողների նյութական բարեկեցությունը և այլն):

Ներքին միջավայրի գործոնները ուղղակիորեն ազդում են կազմակերպության գործունեության կայունության վրա և այդ պատճառով էլ ղեկավարությանը անհրաժեշտ է հաշվի առնել դրանց ազդեցությունը տնտեսական վերլուծություններ կատարելիս և կառավարչական որոշումներ ընդունելիս:

Ակնհայտ է, որ կազմակերպությունների կայունության ապահովման գործընթացում դրանք առնչվում են տարբեր անորոշությունների հետ: Վերջիններիս գնահատումը էնտրոպիայի ցուցանիշի միջոցով՝ թույլ կտա խուսափել կայունության խախտման հնարավոր բարձր աստիճանից:

Կազմակերպվածության մակարդակը որոշվում է տեղեկատվության մակարդակով, որում գտնվում է համակարգը:

Անորոշության նվազումը տեղի է ունենում տեղեկատվական գործընթացների արդյունքում ի հաշիվ արտաքին միջավայրի հետ տեղեկատվության փոխանակման: Այն համակարգերը, որոնք տեղեկատվություն են հայթայթում ինքնակառավարման համար, ամենակազմակերպված համակարգերն են:

Հենվելով աշխատանքում շարադրվածի վրա, հեղինակը նշում է, որ կազմակերպության տնտեսական կայունության հայեցակարգային մոտեցումները մշակելիս անհրաժեշտ է ելնել արտաքին միջավայրի հետ նրա փոխգործակցության, տեղեկատվության ապահովման և ռազմավարական ընտրության կողմնորոշիչներից:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Արդյունաբերական կազմակերպությունների կայունության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում»***, գլխում կատարվել է Հայաստանի արդյունաբերական կազմակերպությունների կայունության մակարդակի վերլուծություն, հիմնավորվել է պետության դերը արդյունաբերական կազմակերպությունների կայունության ապահովման գործում:

Արդյունաբերության զարգացումը մեծամասամբ որոշում է տնտեսության տարբեր ոլորտներում աշխատանքի արտադրողականության մակարդակը, տեխնիկական առաջադիմության ընթացքը, ինչպես նաև բնակչության կենսամակարդակը, երկրի պաշտպանունակության և տնտեսության մեջ կառուցվածքային բարեփոխումների արդյունավետությունը: Այդ պատճառով արդյունաբերության հիմնական խնդիրը տնտեսության բոլոր ոլորտները բարձր տեխնիկական մակարդակով հիմնական և շրջանառու ֆոնդերով ապահովումն է, ինչը կարևոր պայման է տնտեսական և սոցիալական հիմնախնդիրների բարեհաջող լուծման համար:

Համաձայն Հայաստանի վիճակագրական տարեգրքի 2021թ. վերլուծության՝ արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում գերակշիռ դիրք է գրավում մշակող արդյունաբերությունը[4]: Արդյունաբերության հաջորդ խոշոր ոլորտը հանքարդյունաբերությունն է (հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում): Գծապատկեր 1-ում[5] բերված է այս երկու ոլորտների հավելաճի տեմպերը:

---

[4] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2021 Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (ԱՐՄՍՏԱՏ), Երևան, 2021 [82]

[5] Հայաստանի վիճակագրական տարեգիրք,Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (ԱՐՄՍՏԱՏ), Երևան, 2021 [82]



Գծապատկեր 1

Արդյունաբերական ոլորտի արտադրանքի հավելաճի տեմպը

Ոլորտներում հավելաճի տեմպերը պայմանավորված են տեխնոլոգիական զարգացմամբ, նորարարությունների ներդրմամբ և կիրառմամբ, ներդրումների մակարդակով: Covid 19-ի և պատերազմի հասցրած վնասների արդյունքում 2020 թվականի ցուցանիշը զգալիորեն ցածր է մնացած տարիների ցուցանիշներից:

Պայմանավորված մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, ՀՀ արդյունաբերական կազմակերպությունները ունեն ցածր մրցունակություն, թույլ է մարքեթինգային համակարգը, հնացած և մաշված են հիմնական ֆոնդերը, զգացվում է շրջանառու միջոցների պակասը, անհրաժեշտ ծավալով չեն օգտագործվում արտադրական կարողությունները: Արդյունաբերական կազմակերպությունների համար բնորոշ է նաև հումքի, համալրող մասերի այլընտրանքային մատակարարումների բացակայությունը: Միաժամանակ արտադրական և ֆինանսական մենեջմենթի արդյունավետ համակարգերի բացակայությունը բերել է նրան, որ արտադրանքի արտադրական - առևտրային ցիկլը հասնում է մի քանի ամսվա:

Նորմատիվա-իրավական դաշտի թերությունները, քաղաքական իրավիճակը, տրանսպորտային թույլ լոգիստիկան, բանկային երկարաժամկետ վարկերի բացակայությունը ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների բացակայության գլխավոր պատճառներն են:

Իրավական տեսանկյունից, կառավարությունը պետք է իրականացնի միջոցառումներ՝ ՀՀ կարևոր ենթակառուցվածքների անհրաժեշտ օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերի մշակման, դրանց անընդհատ կատարելագործման կամ վերափոխման ուղղությամբ, ինչպես նաև անհրաժեշտ է խստացնել միջոցառումների համակարգը գների արհեստական բարձրացման դեմ:

Կառավարությունը կարող է տրամադրել հատուկ վարկային և հարկային արտոնություններ՝ խրախուսելու արդյունաբերության զարգացումը: Օրինակ, արտադրության ոլորտում տրամադրելու ավելի ցածր տոկոսադրույքով առավել երկարաժամկետ վարկեր, իսկ ներմուծվող արտադրատեսակները Հայաստանում արտադրելու դեպքում կիրառել հարկային զգալի արտոնություններ, ընդհուպ մինչև 4-ից 5 տարի հարկերից դրանց լրիվ ազատումը (հատկապես, սահմանամերձ շրջաններում):

ՀՀ տնտեսության զարգացման համար առանձնապես կարևոր է պետական ներգործության լծակների ուժեղացումը, քանի որ տնտեսության պետական կարգավորումը և ազատ շուկայական հարաբերությունները, ինչպես վկայում է զարգացած երկրների փորձը, իրար չմերժող, դինամիկորեն զարգացող տնտեսական համակարգի օրգանապես փոխկապակցված տարրեր են:

Պետական աջակցությունը պետք է ուղղվի գիտատար և մրցունակ արտադրությունների զարգացմանը:

Հատկապես կարևոր է, որ պետությունն իր վրա վերցնի երկարատև արտադրական ցիկլով արդյունաբերական ոլորտների ներդրումային որոշակի բեռը և կենտրոնացնի ֆինանսական հնարավոր միջոցները արդյունաբերության բազային ոլորտների և հզորությունների վերականգման վրա:

ՀՀ արդյունաբերական արտադրության արմատական բարեփոխումների կարևորագույն խնդիրներից մեկը արտաքին տնտեսական կապերի բարելավումն է: Այն արդյունաբերության անկման հաղթահարման, կառուցվածքային վերափոխումների իրականացման և նրա արդյունավետության բարձրացման գործուն միջոց է:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման պլանի շրջանակներում, մեր կարծիքով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ համալիր միջոցառումների կենսագործմանը[6].

- տնտեսության վերակառուցման, մասնավորապես՝ արդյունաբերության ճյուղային կառուցվածքի ձևավորման ու փոփոխման գործընթացները պետք է տեղի ունենան կառավարության ակտիվ մասնակցությամբ և վերահսկողությամբ, անհրաժեշտ է պարբերաբար մշակել և իրականացնել տնտեսական կայունության ապահովման, լոգիստիկական մոտեցումների ներդրման, գերակա ճյուղերի աշխուժացմանն ուղղված կոնկրետ միջոցառումներ (ընդ որում, նախ և առաջ, արդյունաբերության ճյուղերի և ենթաճյուղերի համար),
- աշխատանքներ իրականացնել ՀՀ տնտեսության մեջ արտադրվող հիմնական արտադրատեսակների, ինչպես նաև տարբեր ոլորտներում մատուցվող ծառայությունների մրցունակության գնահատման (և դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ),
- խստացնել միջոցառումների համակարգը՝ գների արհեստական բարձրացման դեմ,
- ՀՀ ունեցած արտաքին պետական պարտքի նկատելի չափերը և արտասահմանյան ներդրումների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը պահանջում են, որ առավել խրախուսվի ժամանակակից բարձր տեխնոլոգիաների նեմուծումը:

Ատենախոսության երրորդ՝ ***«Արդյունաբերական կազմակերպությունների կայունության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»,*** գլխում ներկայացվել են պետություն-մասնավոր գործընկերության բարելավման հնարավոր ուղղությունները, մշակվել են արդյունաբերական կազմակերպությունների նորարական գործունեության խթանման լծակները և առաջադրվել են արդյունաբերական կազմակերպություններում սոցիալական

---

[6] Աղաջանյան Ա.Լ., Աղաջանյան Լ. Հ., Աղաջանյան Լ.Լ., Խաչատրյան Լ. Հ., Արդյունաբերության զարգացման առաջնահերթությունները Հայաստանի Հանրապետությունում: ՀԱՊՀ Լրաբեր գիտական հոդվածների ժողովածու, մաս 2 Երևան, 2018, էջ 480 [1]

կայունության ամրապնդման համար անհրաժեշտ մեխանիզմներ և մոտեցումներ:

Արդյունաբերության զարգացման տեսանկյունից հզոր գործիք կարող է հանդիսանալ պետություն-մասնավոր գործընկերության բարելավումը:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, փոխշահավետ պետություն-մասնավոր գործընկերությունը կարող է դառնալ տնտեսության զարգացման ամուր հենասյուն:

Մի կողմից, այս համագործակցությունը մասնավոր հատվածին խոստանում է.

- ֆինանսական միջոցների ընդլայնման հնարավորություն,
- հիմնական միջոցների արդիականացում,
- նորարարական տեխնոլոգիաների կիրառություն,
- հմուտ կադրային բազա,
- ռիսկերի տեղափոխում,
- ներդրումների ներգրավում,
- գործարարության զարգացում:

Մյուս կողմից՝ պետության համար այն շահավետ հնարավորություն է՝

- ներգրավել մասնավոր կապիտալ ներդրումներ , որոնք կարող են օգտագործվել պետական ռեսուրսների համալրման կամ հանրային այլ կարիքները հոգալու համար,
- արդյունավետության բարձրացման, առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման
- ոլորտների բարեփոխման՝ ի հաշիվ դերերի, պատասխանատվության, դրդապատճառների վերաբաշխման:
- Պետություն-մասնավոր գործընկերության արդյունավետության բարձրացման նպատակով, մեր կարծիքով ավելի մատչելի պետք է դարձնել համագործակցության սահմաններում գործող կառուցակարգերը և գործընկերոջ ընտրության ընթացակարգերը, ինչպես նաև, իրականացնել օրենսդրական բարեփոխումներ:
- Պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում՝ պետությունը, կիրառելով իր լծակները, կարող է հանդես գալ որպես խթանիչ ուժ՝ անհրաժեշտ ռեսուրսների հայթայթման, հիմնական միջոցների նորացման կամ ձեռք բերման, նոր շուկաների ներթափանցման, արտաքին գործընկերների հետ կապերի հաստատման համար: Այդպիսով կստեղծվեն

նախադրյալներ ոչ միայն արդյունաբերության զարգացման կամ կայունության աստիճանի բարձրացման, այլև ընդհանուր տնտեսության առաջընթացի համար:

- Այս համատեքստում, ՊՄԳ ծրագրերի շրջանակներում, ընկերություններին պետք է տրամադրվի ավելի ամուր աջակցություն պետության կողմից: Ռիսկերի բաշխման տեսանկյունից՝ պետությունը կարող է ավելի շատ ռիսկեր կիսել մասնավոր գործընկերների հետ: Այն թույլ կտա բարելավել ոչ միայն համագործակցության արդյունքները, այլև հասնել ոլորտում կայունության մակարդակի բարձրացման: Մյուս կողմից՝ խուսափել անկանխատեսելի ռիսկերի անբարենպաստ ազդեցություններից:
- Կարևոր գործոն կարող է հանդիսանալ նաև համագործակցության ճկունության բարձրացումը: Այն հնարավորության կտա պետությանը ավելի լայն աջակցություն ցուցաբերել մասնավոր հատվածի գործընկերներին, այդպիսով ավելի ամպրապնդել պետության և մասնավոր հատվածի կապը և խթան հանդիսանալ հետագա նմանատիպ այլ նախաձեռնությունների իրականացմանը:
- Որպես պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացման կառուցակարգ կարելի է դիտարկել նաև իրավական նորմերում մասնավոր հատվածների առաջարկները: Պետությունը կարող է հնարավորություն տալ մասնավոր հատվածին՝ լրացնելու պայմանագրում և առհասարակ ոլորտում առկա իրավական բացթողումները, հանդես գալ առաջարկություններով՝ համապատասխան ոլորտում առաջընթաց գրանցելու նպատակով, այդպիսով ուժեղացնելով ոչ միայն համագործակցությունը, այլև այն առաքելությունը, որին միտված էր այդ համագործակցությունը:
- Արդյունաբերության ոլորտում ՊՄԳ համագործակցությունը կշահի, եթե պետությունը, որպես ավելի մեծ հնարավորությունների տիրապետող, բարձրացնի մասնավոր հատվածին տրամադրվող ֆինանսավորումը, տրամադրի հատուկ վարկային և հարկային առավելություններ, որոնք կարող են ուղղվել տեխնիկական համալրմանը, նորարարական գործունեության խթանմանը կամ ենթակառուցվածքների ուժեղացմանը: Բացի այդ, կարգավորի իրավական և հարկային

նորմերը՝ արտահանման ծավալների ընդլայնման և նոր շուկաների նվաճման նպատակով:

Տնտեսավարող սուբյեկտների գործունեության կայունության ուղիների մշակման և իրականացման վրա, ինչպես արդեն նշվեց, բացասական ազդեցություն են գործում մի շարք երևույթներ:

Աշխատանքում նշվել են Հայաստանի արդյունաբերության ոլորտում նորարարական-ներդրումային քաղաքականության արդյունավետ կիրառմանը խոչնդոտող մի շարք սահմանափակող գործոններ, որոնք պահանջում են, որպեսզի տնտեսության զարգացման հեռանկարների առումով Հայաստանի արդյունաբերության զարգացման նորարարական-ներդրումային քաղաքականությունը շատ ճկուն և հենվի հետևյալ սկզբունքների օգտագործման վրա.

- աջակցի տնտեսության ոլորտներին՝ զբաղվելու նորամուծական-ներդրումային ակտիվ գործունեությամբ:
- խրախուսի համաշխարհային լավագույն չափանիշներին համապատասխան տեխնիկայի և տեխնոլոգիայի մշակումը,
- ուղղորդի արդյունաբերական կազմակերպություններին մշակելու նոր, բարձրորակ և մրցունակ արտադրանք,
- հնարավորություն ընձեռի ռազմա-արդունաբերական համալիրի գիտական նվաճումների ներդրմանը արդյունաբերության մեջ,
- պաշտպանի և հովանավորի ներքին շուկայի հայրենական արդյունաբերական արտադրանքը:

ՀՀ արդյունաբերության զարգացման համար շատ կարևոր է նաև մասնավոր ներդրողների և առևտրային կառույցների ակտիվ ներգրավումը՝ որպես երաշխիք նախագծերի բարձր արդյունավետության ապահովման: Միաժամանակ մասնավոր կապիտալի ներգրավումը ինքնին չի լուծի արդյունաբերության ներդրումների հիմնախնդիրը առանց բյուջետային պետական ներդրումների մասնակցության:

Աշխատանքում բացահայտվել են ՀՀ արդյունաբերական արտադրանքի մրցունակության ոլորտում հիմնական առավելությունները և թերությունները, վեր են հանվել ՀՀ տնտեսական համակարգում արդյունաբերության զարգացման հիմնական խնդիրները: Մեր կարծիքոբ ՀՀ արդյունաբերության զարգացման խնդիրների լուծումը հնարավոր է հետևյալ համալիր միջոցառումների մշակմամբ և իրականացմամբ.

- արտաքին ներդրումների ներգրավման նպատակով գիտատեխնիկական նախագծերի ընտրության կառուցակարգի մշակում,
- պետական աջակցություն միջազգային տնտեսական միավորումների և կառույցների (հոլդինգային ընկերությունների, ասոցիացաների, կոնսորցիումների և այլնի) ձևավորմանը:
- մարքեթինգային հետազոտությունների իրականացում՝ արդյունաբերական արտադրանքի վճարունակ պահանջարկի բացահայտման նպատակով,
- պետական պատվերների ընդլայնում և արտոնությունների ու խթանների համակարգի ձևավորում,
- աշխատանքային ռեսուրսների պահանջարկի կանխատեսում,
- արդյունաբերական գիտահետազոտական կազմակերպությունների համար հարկային արտոնությունների սահմանում և բանկային վարկի արտոնյալ պայմանների տրամադրում:

Մեր կարծիքով, զարգացումը համընդհանուր, բազմամակարդակ ռազմավարություն է, որն ուղղված է կազմակերպությունում մշտական դրական փոփոխությունների կատարմանը և որի իրականացումը ուղեկցվում է նրա կայունության բարձրացմամբ: Այս համակարգի գլխավոր տարրը հանդիսանում է մարդը: Համակարգի տարրերի զարգացումը, միանշանակ կբերի համակարգի կայուն զարգացման: Ամրապնդելով կազմակերպության սոցիալական ենթակառուցվածքները, բարելավելով աշխատանքի պայմանները և աշխատողների նյութական բարեկեցությունը, ուժեղացնելով կադրային ապահովվածությունը, կազմակերպությունը ներդրում է անում ոչ միայն սոցիալական կայունության և սոցիալական զարգացման ուղղությամբ, այլ նաև ողջ համակարգի տնտեսական կայունության ապահովման գործում:

Ատենախոսության ***«Եզրակացություններ»*** բաժնում ամփոփված են հետազոտության հետևյալ հիմնական արդյունքները.

1. Շուկայական հարաբերությունների պայմաններում փոփոխություններին արագ արձագանքելու և պահանջարկ ներկայացնող արտադրանք թողարկելու ու ծառայություններ մատուցելու կարողությունը սուր մրցակցային պայքարում դառնում է հաղթաթուղթ նվաճելու կարևորագույն միջոցներից մեկը: Տնտեսության միջազգայնացման պայմաններում վերանում է տնտեսական տարածության աշխարհագրական և ազգային

սահմանները, արագանում է տեղեկատվական, տեխնոլոգիական և գիտելիքահենք ուղղությունների զարգացումը, հետևաբար մեծանում է արտաքին միջավայրի ձևափոխմանը կազմակերպությունների արագ արձագանքելու պահանջը, ինչն էլ առաջադրում է գործարարության վարման նոր խնդիրներ: Փոփոխություններին արագ հարմարվելը դառնում է տնտեսավարող սուբյեկտների էական առավելություններից մեկը՝ մրցակիցների հետ պայքարում: Ակնհայտ է, որ այդ գործընթացում կազմակերպությունները պետք է կողմնորոշվեն դեպի արտադրության կազմակերպման նորագույն և ժամանակակից ձևերը՝ ուշադրությունը մշտապես կենտրոնացնելով տնտեսական գործունեության կայունության ապահովման կառուցակարգերի կատարելագործման վրա:

2. Կազմակերպության կայունությունը կախված է բազմաթիվ գործոններից, ներքին և արտաքին միջավայրերից, գործունեության բնույթից, ռեսուրսների առկայությունից, կառավարման արդյունավետությունից և այլն: Կազմակերպությունների տնտեսական կայունության ներքին գործոնները՝ գործունեության ուղղությունները, ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, կադրային ապահովվածությունը, կառավարման արդիական մեթոդների օգտագործումը և այլն, էապես կախված են բուն կազմակերպությունում ձևավորված հարաբերություններից և դրանց կանոնակարգվածության աստիճանից: Դրանց հավասարակշռված կարգավորման դեպքում կազմակերպությունը կարող է ապահովել կայունության որոշակի մակարդակ, սակայն կայունության ավելի բարձր մակարդակը պայմանավորված է արտաքին միջավայրի ազդեցությամբ ծագած ռիսկերի արդյունավետ կառավարմամբ:

3. Կազմակերպության կայունության վրա էական է արտաքին միջավայրի ազդեցությունը: Դրան արագ և ճկուն արձագանքելու և անհրաժեշտ փոփոխություններ իրականացնելու համար պետք է պարբերաբար իրականացնել կազմակերպությունում ձևավորված ֆինանսատնտեսական հարաբերությունների մշտադիտարկում և կայունության առկա մակարդակի գնահատում: Կազմակերպության կայունության վրա ազդող արտաքին գործոնները պայմանականորեն բաժանվում են տնտեսականի և շուկայականի: Որպես հիմնական տնտեսական

գործոններ կարող են լինել գնաճը, հարկային համակարգը, դրանում կիրառվող վարչարարությունը, օրենսդրությունը, բնակչության դրամական եկամուտները, գործազրկության մակարդակը, ժողովրդագրական փոփոխությունները և այլն, իսկ շուկայական՝ շուկայի տարողությունը պահանջարկի նվազումը, ֆինանսական շուկայի տատանումները և այլն: Արտաքին միջավայրի գործոնները կազմակերպության ղեկավարության կողմից, ըստ էության, անվերահսկելի են, ինչն էլ պահանջում է դրանց մշտադիտարկում, վերլուծություն, գնահատում և կանխատեսում: Նման մոտեցման պարագայում կազմակերպություններն, անշուշտ, կունենան ռիսկերի կառավարման և կայունության ապահովման ավելի լայն հնարավորություններ:

4. Կազմակերպությունների կայունությունը բնութագրվում է բազմաթիվ գործոններով, որոնց ընդհանրական գնահատականը կարելի է ձևակերպել որպես ներքին և արտաքին միջավայրերի ազդեցության տակ կազմակերպության ֆինանսատնտեսական վիճակի հիմնական ցուցանիշների ցանկալի մակարդակի պահպանման կարողություն: Այս հանգամանքը թույլ է տալիս մրցակցային դաշտում ապահովել կազմակերպության հավասարակշռվածությունը և զարգացման ուղղվածությունը: Նշված տեսանկյունից ՀՀ կազմակերպությունների, հատկապես արդյունաբերական կազմակերպությունների առումով կայունության մակարդակն, անշուշտ, ցածր է: Դա արդյունք է ոչ միայն հանրապետությունում իրականացված սեփականաշնորհման ու ապապետականացման արդյունքում ձևավորված կազմակերպությունների հետագա անարդյունավետ գործունեության, այլ նաև տարածաշրջանում մրցակից կազմակերպությունների բացակայության: Այդ իսկ առումով՝ Հայաստանում արդյունաբերական կազմակերպությունների կայունության մակարդակը բարձրացնելու և գործունեության արդյունավետ ուղիներ որդեգրելու համար անհրաժեշտ է հետևողականորեն մեծացնել պահանջվող արդյունքներին նվազագույն ծախսերով հասնելու կազմակերպությունների ունակությունը: Այն, անշուշտ, պետք է ուղեկցվի արտադրողականության բարձրացմամբ, ռեսուրսների խնայողաբար օգտագործմամբ, թողարկող արտադրանքի որակի

շարունակական լավացմամբ, համախառն եկամտի և գումարային ծախսերի լավագույն հարաբերակցության հաստատմամբ, նորամուծությունների ներդրմամբ, գիտատեխնիկական ներուժի ընդլայնմամբ և այլն:

5. Զարգացող այնպիսի երկրներում, որտեղ շուկայական հարաբերությունների ձևավորումն ունի կարճ պատմություն, կազմակերպությունների կայունությունը մեծապես պայմանավորված է պետության դերով: Տնտեսական հարաբերությունների արմատական փոփոխությունների պայմաններում առանց պետության անմիջական միջամտության և գործուն աջակցության, շատ կազմակերպություններ, հատկապես արդյունաբերական կազմակերպություններ, չեն կարող դիմակայել շուկայական մարտահրավերներին, կապված ֆինանսական ռեսուրսների հայթայթման, հիմնական միջոցների արդիականացման, մրցունակ արտադրանքի թողարկման, արտաքին շուկաներ ներթափանցման, արտադրանքի իրացման և, ընդհանրապես, ժամանակակից արտադրությունների կազմակերպման այլ դժվարությունների հաղթահարման հետ: Պետական աջակցությունն առաջին հերթին պետք է ուղղվի տնտեսության իրական հատված՝ հիմնական շեշտը դնելով գիտատեխնիկական առաջընթացի արագացման, նորամուծությունների խրախուսման, ներդրումային գրավչության բարձրացման , կառավարման ժամանակակից կառուցակարգերի կիրառման վրա:

Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական կազմակերպությունների պետական աջակցության առաջնահերթ և կարևոր ուղղություններ պետք է դառնան՝

- պետության կողմից երաշխիքների տրամադրումը,
- ֆինանսավորման մատչելի աղբյուրների բացահայտումը,
- հիմնական արտադրական ֆոնդերի նորացումը,
- հայրենական արտադրությունների պաշտպանության իրականացումը ,
- արտաքին տնտեսական կապերի զարգացումը,
- ավանդական շուկաների վերականգնումը,
- արդյունաբերության ոլորտում գիտատեխնիկական ծրագրերի իրականացումը,

- ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը:

6. Յուրաքանչյուր երկրի տնտեսական համակարգի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է «պետություն-մասնավոր հատված» գործընկերությամբ: Շուկայական հարաբերությունների պայմաններում կազմակերպությունները կարող են հայտնվել ամենատարբեր դժվարությունների առջև, որոնց հաղթահարումն առանձին կազմակերպությունների առումով կարող է ներկայանալ ոչ իրատեսական: Միևնույն ժամանակ, դրանց կողմից իրականացվող գործունեությունը կարող է կարևոր լինել երկրի համար ոչ միայն տվյալ պահին, այլ նաև՝ հեռանկարում: Նման դեպքերում՝ պետությունը, ոպես ավելի մեծ հնարավորությունների տիրապետող, պետք է աջակցի դժվարությունների հաղթահարմանը՝ ֆինանսավորման, իրացման, նոր շուկաների ներթափանցման, արտաքին գործընկերների հետ կապերի հաստատման, անհրաժեշտ ռեսուրսների ձեռք բերման և այլ հարցերով: Այդպիսով, անշուշտ, ոչ միայն կմեծանա կազմակերպության կայունության աստիճանը, այլև կստեղծվեն լավ նախադրյալներ ընդհանուր տնտեսության կառուցվածքի բարելավման և երկրում ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար: Առաջնորդվելով այդպիսի սկզբունքներով՝ աշխատանքում մշակվել են «պետություն-մասնավոր հատված» գործընկերության բարելավմանն ուղղված առաջարկություններ, որոնք կնպաստեն հատկապես որոշ արդյունաբերական կազմակերպություններում հիմնական միջոցների արդիականացմանը, շրջանառու միջոցների մատակարարման ռիթմիկության ապահովմանը, ֆինանսական հնարավորությունների ընդլայնմանը, տրանսպորտային կապերի հետ կապված բարդությունների հաղթահարմանը, լոգիստիկական համակարգերի արդյունավետ օգտագործմանը և այլն:

7. Հայաստանի տնտեսության կառուցվածքի արդիականացման, հանրապետությունում ներդրումային միջավայրի գրավչության բարձրացման, ինչպես նաև արդյունաբերական կազմակերպությունների ֆինանսատնտեսական կայունության ամրապնդման գործում առանցքային դերակատարում պետք է

ունենա պետությունը, որը բարելավելով գործընկերային կապերը մասնավոր հատվածի հետ՝ այդ ուղղությամբ կստեղծի անհրաժեշտ պայմաններ: Աշխատանքում մշակվել են դրանց ձևավորմանը միտված առաջարկություններ, որոնք կհանգեցնեն նորամուծական գործունեության խթանմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը, և ներդրումների ներգրավման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

8. Զարգացած երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսության կայունության և առաջընթացի ապահովման գործում մեծ է սոցիալական գործոնի դերը: Զարգացող և հատկապես շուկայական հարաբերություններին նոր անցած երկրներում այդ գործոնը, որպես կանոն, մղված է հետին պլան, ինչը, բնականաբար, խիստ բացասաբար է ազդում ոչ միայն ամբողջ տնտեսության, այլ նաև նրա հիմնական օղակների՝ կազմակերպությունների կայունության վրա: Աշխատանքում հիմնավորվել է սոցիալական կայունության անհրաժեշտությունը որպես ամբողջ կազմակերպության կայունության ապահովման կարևորագույն գործիք: Առաջադրվել են սոցիալական կայունության ամրապնդմանն ուղղված մոտեցումներ, որոնք էականորեն կնպաստեն արդյունաբերական կազմակերպություններում արտադրողականության բարձրացմանը, գործարար ակտիվության խթանմանը, նորամուծությունների առաջադրմանը, ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը և այլն:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Աղաջանյան Ա. Կազմակերպության կայունությունը և զարգացման ռազմավարության մշակումը.: ՀԱՊՀ ԼՐԱԲԵՐ Գիտական հոդվածների ժողովածու, մաս 2, Երևան 2017, էջ 655-660:
2. Աղաջանյան Ա. Կազմակերպության կայունության հայեցակարգը.: ՀԱՊՀ ԼՐԱԲԵՐ Գիտական հոդվածների ժողովածու, մաս 2, Երևան 2019, 'էջ 338-343
3. Агаджанян А. Современные подходы к оценке эффективности и устойчивости машиностроительных организаций4.. Вестник Национального Политехнического Университета Армении , Механика, Машиноведение, Машиностроение № 1, Ереван 2019, с.. 60-68.
4. Աղաջանյան Ա. Տնտեսական կայունության լոգիստիկական մոտեցումներն արդյունաբերական կազմակերպություններում.: ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ,Երևան, 1/2019 էջ 126-132.
5. Աղաջանյան Լ.Հ., Խաչատրյան Լ.Հ., Աղաջանյան Ա.Լ., Աղաջանյան Լ.Լ. Արդյունաբերության զարգացման առաջնահերթությունները Հայաստանի Հանրապետությունում.: ՀԱՊՀ ԼՐԱԲԵՐ: Գիտական հոդվածների ժողովածու, մաս 2.- Երևան, 2018.- էջ 477-482:
6. Агаджанян Л.Г., Агаджанян А.Л., Галстян О.А., Эффективность инновационной деятельности промышленных организаций. ВЕСТНИК инженерной академии Армении Сборник научно-технических статей, том 12, номер 4, Ереван 2015, с. 599-603.
7. Աղաջանյան Լ.Լ., Արդյունաբերական կազմակերպության կայունության հայեցակարգի մշակման լոգիստիկական մոտեցումները: ՀԱՊՀ ԼՐԱԲԵՐ Գիտական հոդվածների ժողովածու, մաս 1, Երևան 2021, էջ 135-139
8. Աղաջանյան Լ. Լ., Բաղրամյան Գ. Ս., Տնտեսական կայունության լոգիստիկական տեսանկյունները: Ճգնաժամային Կառավարում և Տեխնոլոգիաներ, No 2, Երևան 2020, էջ 110-116

АГАДЖАНЯН АРТАК ЛЕВИКОВИЧ

ПРОБЛЕМЫ УСТОЙЧИВОСТИ ПРОМЫШЛЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика, управление хозяйством и его сферами»

Защита диссертации состоится 1-ого июля 2022 года, в 15:00 на заседании специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете,

по адресу: 0009, г. Ереван, ул. Х. Абовяна 52

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования. Устойчивость - это характеристика организации, ее способность действовать, развиваться в условиях внешних и внутренних влияний, сохраняя при этом равновесие. Изучение основ устойчивости организации и теории развитии и разработка практических предложений позволит качественно изменить подходы к регулированию организаций и процессов, происходящих в них что в конечном итоге будет способствовать эффективной адаптации организаций к рыночным условиям.

Цель и задачи исследования. Разработка подходов и предложений направленных на обеспечение устойчивости промышленных организаций в условиях рыночных отношений, для достижения которой в работе были поставлены следующие задачи:

- изучить теоретические и методологические основы организационной устойчивости;
- выявить факторы, влияющие на устойчивость промышленных организаций;
- проанализировать методы оценки устойчивости организаций;
- изучить особенности обеспечения устойчивости промышленных предприятий Армении;
- оценить уровень устойчивости промышленных предприятий Армении;
- выявить роль государства в обеспечении устойчивости промышленных организаций;
- разработать рекомендации по совершенствованию государственно-частного партнерства,

- разработать предложения по продвижению инновационной деятельности социальной стабильности на промышленных предприятиях.

Объект и предмет исследования. Объектом исследования является комплекс теоретических и практических вопросов повышения устойчивости промышленной организации, а предметом - промышленные организации Республики Армения, осуществляемые в них экономические процессы.

Основные научные результаты и новизна исследования. На основе теоретических исследований, анализа и научных обобщений, был поучен ряд основных результатов, среди которых нижеследующие выделяются научной новизной:

1. В целях совершенствования структуры промышленности РА и повышения эффективности инвестиционной политики в республике, в работе разработаны предложения, направленные на совершенствование государственно-частного партнерства, направленные на модернизацию основных фондов, привлечение оборотных средств, управление финансовыми потоками, использование систем транспортной и производственной логистики.
2. С целью повышения экономической устойчивости промышленных организаций Армении были разработаны концептуальные подходы, что позволит на основе взаимодействия организации с внешней средой, информационной обеспеченности и выбора стратегических направлений деятельности, продвигать привлечение иностранных инвестиций и развитие технологических направлений производства.
3. Реализовано всестороннее обоснование потенциала социального фактора в обеспечении устойчивости организаций и разработаны подходы к его усилению, что будет способствовать повышению производительности в организациях, продвижению деловой активности, выдвижению инноваций и рациональному использованию ресурсов.

ARTAK LEVIK AGHAJANYAN
SUSTAINABILITY PROBLEMS IN THE INDUSTRIAL ORGANIZATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA

The abstract of the dissertation for the pursuing of scientific degree of a PhD of Economics on the specialty 08.00.02 – "Economics and Management of Economy and its Spheres"

The defense of the dissertation will take place July 1st 2022 at 15:00, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: 0009, Yerevan, 52 Abovyan str.

SUMMARY

The relevance of the topic under the research. Sustainability is a characteristic of an organization, its ability to act, develop in conditions of external and internal influences, while maintaining balance. Studying the basics of organizational sustainability and development theory and the elaboration of practical proposals will make it possible to qualitatively change the approaches to the regulation of organizations and the processes occurring in them, which ultimately will contribute to the effective adaptation of organizations to market conditions.

The main aim and tasks of the research. The main aim of the work is to develop approaches and suggestions aimed at ensuring the sustainability of industrial organizations in the conditions of market relations, for the achievement of which the following tasks were set in the work:

- to study the theoretical and methodological foundations of organizational sustainability;
- to identify the factors affecting the sustainability of industrial organizations;
- to analyze methods for assessing the sustainability of organizations;
- to study the specifics of ensuring the sustainability of industrial enterprises in Armenia;
- to assess the level of sustainability of industrial enterprises in Armenia;
- to identify the role of the state in ensuring the sustainability of industrial organizations;
- to develop recommendations for improving public-private partnerships,
- to develop proposals for the promotion of innovative activities of social sustainability at industrial enterprises.

Object and subject of the research. The object of the research is the complex of theoretical and practical issues of increasing the sustainability of an industrial

organization, and the subject is the industrial organizations of the Republic of Armenia, the economic processes carried out in them.

Main scientific results and novelty of the research. Based on the research analysis and scientific generalizations, carried out in the work, a number of main results were obtained, among which the following stand out as scientific novelty:

1. In order to improve the structure of the RA industry and increase the efficiency of investment policy in the republic, proposals were developed aimed at improving public-private partnerships, directed at modernizing fixed assets, attracting working capital, managing financial flows, using transport and production logistics systems.

2. In order to increase the economic sustainability of industrial organizations in Armenia, conceptual approaches have been developed, which will allow, based on the interaction of the organization with the external environment, information provision and the choice of strategic directions of activity, to promote the attraction of foreign investment and the development of technological directions of production.

3. A comprehensive justification of the potential of the social factor in ensuring the sustainability of organizations was implemented and approaches were developed to strengthen it, which will contribute to increasing productivity in organizations, promoting business activity, nomination innovation and rational use of resources.